ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ս. ԱՊՐԵՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ապրեսյան.

Ի պատասխան Ձեր 27.02.2020թ. հ.02/043 գրության՝ տեղեկացվում է, որ կատարվել է տնային այցելություն Սիրանուշ Տելյանի (հասցե՝ Վարդաշեն 6-րդ փողոցի հ.68ա շենքի հ.220 բնակարան) ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների ուսումնասիրության նպատակով:

Ս. Տելյանի ընտանիքը յոթ անձով ապրում է 26 քմ տարածքով բնակարանում, որն անհատույց օտարվել է իրենց ընտանիքին: Բնակարանը կահավորված է եղել անհրաժեշտ տեխնիկայով:

Ս. Տելյանը (ծնված՝ 1975թ.) 3-րդ խմբի հաշմանդամ է, ստանում է 25500 դրամ հաշմանդամության նպաստ, երբեմն տանը կատարում է հագուստի վերանորոգման աշխատանքներ: Ամուսինը՝ Գրիգոր Վարպետյանը (ծնված՝ 1967թ.) մասնագիտությամբ կոշկակար է, իր հայտարարությամբ մշտական աշխատանք և եկամուտ չունի: Որդին՝ Ալբերտ Վարպետյանը (ծնված՝ 1996թ.) նվագում է «Մարաթուկ» համույթում և իր հայտարարությամբ ստանում է 48000 դրամ աշխատավարձ: Հարսը՝ Արմինե Սիմոնյանը (ծնված՝ 1998թ.) չի աշխատում, խնամում է երեխային (ծնված՝ 2019թ.): Դուստրը՝ Անի Տելյանը (ծնված՝ 2001թ.) հաճախում է դիմահարդարման դասընթացների: Մորաքույրը՝ Ռոզա Իշխանովան (ծնված՝ 1938թ.) նախկինում ապրել է Սիրանուշ Տելյանի ծնողների հետ Աշտարակ քաղաքում, ներկայումս բնակվում է վերոնշյալ ընտանիքում և ստանում է 30000 դրամ կենսաթոշակ:

Ս. Տելյանը միաժամանակ խնամում է իր մորը, որն ունի առողջական խնդիրներ և ներկա պահին ստանում է ստացիոնար բուժում:

Ս. Տելյանի ընտանիքը 4 անձով հաշվառված է եղել Էրեբունու սոցիալական աջակցության տարածքային կենտրոնի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և մինչև 30.07.2016թ. ներառյալ ստացել է ընտանեկան նպաստ: Ընտանիքը հերթական փաստագրմանը չի ներկայացել, քանի որ փոխվել է ընտանիքի կազմը, ինչն առաջացրել է պետական ռեգիստրից ստացված առցանց հարցմամբ տեղեկատվության և փաստացի բնակվող անձերի թվի անհամապատասխանություն: ՍԱՏԲ-ի կողմից տրամադրվել է խորհրդատվություն անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն քաղաքացին հրաժարվել է հերթական փաստագրումից:

Ընտանիքի կարիքների համակողմանի ուսումնասիրությամբ որպես առաջնային կարիք գնահատվել է ընտանիքի բնակելի մակերեսի անբավարար լինելու հանգամանքը: Ընտանիքը յոթ անձով ապրում է 26քմ տարածք ունեցող բնակարանում, ինչն անհարմարություններ է առաջացնում ընտանիքի բնականոն ապրելակերպի համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ